ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հոգաբարձուների Խորհրդի անդամի նշանակման կամ ընտրության մասին

Սույնով հայտարարում ենք, որ սույն թվականի հուլիսի 1-ին ավարտվում է **Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի** (այսուհետ՝ Հաշտարարի գրասենյակ) **խորհրդի մյուս կազմակերպությանների միությունների անդամի պաշտոնավարման ժամկետը:**

Այս կապակցությամբ անհրաժեշտ է **ընտրել նոր խորհրդի անդամ**՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և «Կազմակերպությունների միությունների և սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հոգաբարձուների խորհրդի անդամների նշանակման կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 20.11.2020թ. թիվ 190-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) պահանջների:

Որոշման համաձայն **վերը նշված կազմակերպությունները մեկից ավելի լինելու դեպքում**, կազմակերպվում է **ժողով**:

Ժողովն անցկացվելու է 2025 թվականի **ապրիլի 15**-ին՝ ժամը **11:00**-ին ՀՀ կենտրոնական բանկի շենքում՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6 հասցեում:

Վերոհիշյալ պահանջներին բավարարող կազմակերպությունները, պետք է **ժողովին մասնակցելու համար մինչև 2025 թվականի ապրիլի 2-ը գրավոր հայտ** ներկայացնեն ՀՀ կենտրոնական բանկ (փոստային հասցեով կամ secretariat@cba.am էլեկտրոնային եղանակով):

Հայտում անհրաժեշտ է նշել նաև ժողովին մասնակցող անձի վերաբերյալ տեղեկատվություն և կցել Օրենքով և Որոշմամբ նախատեսված պահանջները բավարարող փաստաթղթեր կամ հայտարարություն դրանց համապատասխանելու վերաբերյալ:

Այն կազմակերպությունները, որոնք մեկից ավել չեն, համաձայն Օրենքի պետք է նշանակեն Խորհրդի անդամ՝ 2025 **ապրիլի 1-ից** մինչև **ապրիլի 25-ը** ընկած ժամանակահատվածում և նշանակման օրվանից 3 օրվա ընթացքում սույն հայտարարությամբ նշված եղանակներով Կենտրոնական բանկ ներկայացնեն նշանակման վերաբերյալ իրավասու մարմնի կողմից հաստատված իրավական ակտը՝ ուղեկցող գրությամբ: Գրությունում պետք է նշել նաև այդ թեկնածուի անունը և ազգանունը, նրան առաջադրող կազմակերպության անվանումը և վերջինի հավաստումն առ այն, որ ներկայացված թեկնածուն իր մասնագիտական կարողություններով ի վիճակի է ապահովել Օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված խորհրդի լիազորությունների պատշաճ իրականացումը և առկա չեն Օրենքի 29-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները:

Տեղեկացնում ենք նաև, որ Օրենքի համաձայն մինչև սույն թվականի ապրիլի 29-ը խորհրդի անդամներ չընտրելու կամ չնշանակելու դեպքում նրանք պետք է նշանակվեն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել (010) 59-25-92 (ներքին՝ 0844) հեռախոսահամարով:

ՀՀ կենտրոնական բանկ